

Հաստատված է

“Կուր Ինվեսթ” ՓԲԸ

հիմնադիր ժողովի կողմից

“16” հունվարի 2023թ.

Ժողովի նախագահ՝ Ա. Տեր-Հակոբյան



**“Կուր Ինվեսթ” ՓԲԸ**

**Փողերի լվացման և ահաբեկչության**

**Ֆինանսավորման դեմ պայքարի մասին**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

ք. Երևան 2023

## **ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) մշակվել է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքի» (այսուհետ՝ Օրենք), ՀՀ Կենտրոնական բանկի (այսուհետ՝ Լիազոր մարմին) կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի և դրանցում համապատասխանաբար կատարված փոփոխությունների և լրացումների, «Կուբ Ինվեսթ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան

Կանոնակարգը սահմանում է փողերի լվացմանն ու ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելու Ընկերության կողմից վարվող քաղաքականությունը, իրականացվող այն պարտադիր միջոցառումները և ընթացակարգերը, որոնք կբացառեն Ընկերության միջոցով հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների շրջանառությունն ու ահաբեկչության ֆինանսավորումը, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումները, կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը, սույն Կանոնակարգի կատարման հետ կապված Ընկերության աշխատակիցների պարտականություններն ու պատասխանատվությունը:

1. Ընկերությունը վարում է այնպիսի քաղաքականություն, որը հնարավորինս բացառում է հանցավոր ճանապարհով ձեռք բերված և ահաբեկչության ֆինանսավորման աղբյուր հանդիսացող միջոցների ներդրումը կամ շրջանառությունն Ընկերությունում:
2. Կանոնակարգը գործում է Ընկերության ամբողջ համակարգում, նրանում առկա դրույթները տարածվում են Ընկերության կառավարման բոլոր մարմինների, կառուցվածքային ստորաբաժանումների, դրանց ղեկավարների և համապատասխան աշխատակիցների վրա:

## **ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կանոնակարգում, ինչպես նաև Կանոնակարգի հիման վրա ընդունված այլ ներքին իրավական ակտերում օգտագործվող հիմնական հասկացություններն են.

**Լիազոր մարմին**–ՀՀ Կենտրոնական Բանկ

**Ընկերության կառավարման մարմիններ** - Գործադիր տնօրեն, Խորհուրդ (առկայության դեպքում), բաժնետերերի Ընդհանուր Ժողով:

**Ներքին դիտարկումների մարմին** - Ընկերության ՓԼ/ԱՖ կանխարգելմամբ զբաղվող ներքին դիտարկումների ստորաբաժանում կամ աշխատակից կամ մասնագիտացված գործունեություն իրականացնող համապատասխան անձ:

**Սպասարկող ստորաբաժանում** - Ընկերության այն կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք անմիջականորեն իրականացնում են հաճախորդների սպասարկում և կնքում են գործարքներ, իրականացնում են այլ ֆինանսական գործառնություններ:

**Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտներ** - ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված արարքների կատարմամբ ստացված գույքը, այդ թվում՝ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտները (ՀՀ Քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված գույքը):

**Փողերի լվացում** - ՀՀ Քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը:

**Ահաբեկչության ֆինանսավորում** - ՀՀ Քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը:

**Ջանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումը** գույքի տրամադրումը կամ հավաքումն է կամ ֆինանսական ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 153-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման նպատակով:

**Ահաբեկչության հետ կապված անձ** - ցանկացած անհատ ահաբեկիչ, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության փորձի մեջ կասկածվող, մեղադրվող կամ դրանց համար դատապարտված անձ կամ ահաբեկչական կազմակերպություն է, նրանց հետ փոխկապակցված անձ, նրանց կողմից կամ նրանց անունից կամ նրանց ցուցումների ներքո գործող կամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն նրանց պատկանող կամ նրանց կողմից կառավարվող այլ անձը, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն կամ լիազոր մարմնի հրապարակած ցանկերում:

**Ջանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձը** ցանկացած անձ է, որը ներառվել է Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի՝ զանգվածային ոչնչացման զենքի տարածման և (կամ) դրա ֆինանսավորման համար թիրախային ֆինանսական պատժամիջոցներ սահմանող բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ցանկերում:

**Ընկերության ՓԼ/ԱՖ տվյալների ընդհանուր բազա**- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից հրապարակված անձանց և կազմակերպությունների, Լիազոր մարմնի կողմից ներկայացված ցանկերի և Ընկերության վերլուծությունների հաշվին հավաքագրված տեղեկությունների ցանկի հիման վրա կազմված ընդհանուր բազա:

**Գործարք** - Ընկերության և հաճախորդի կամ լիազորված անձի միջև, ինչպես նաև հաճախորդի կամ լիազորված անձի և այլ անձի միջև գործարքն է, որը կատարվում է Ընկերության միջոցով:

Գործարք կարող է համարվել նաև որոշակի գործարքի հիման վրա կամ դրա արդյունքում իրավունքներ և պարտականություններ առաջացնող, փոփոխող կամ դադարեցնող յուրաքանչյուր գործողություն

**Գործարքի մյուս կողմ** - Հաճախորդի կողմից իրականացվող գործարքի այլ մասնակից, որը տրամադրում (փոխանցում) կամ որին հասցեագրվում են գործարքից բխող դրամական միջոցները կամ այլ գույք

**Կասկածելի գործարք կամ գործարար հարաբերություն** - գործարքը կամ գործարար հարաբերությունն է, այդ թվում՝ գործարքի կատարման կամ գործարար հարաբերության հաստատման փորձը, որի դեպքում կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գույքը ստացվել է հանցավոր ճանապարհով կամ կապված է ահաբեկչության, ահաբեկչական գործողությունների, ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների հետ կամ օգտագործվել է կամ առկա է մտադրություն այն օգտագործելու ահաբեկչության նպատակով կամ ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կամ ահաբեկչությունը ֆինանսավորողների կողմից:

**Իրական շահառու** - ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

**Միանգամյա գործարք** - Այն գործարքը, որի արդյունքում հաճախորդի և Ընկերության միջև պարբերական ծառայությունների տրամադրման պարտավորություններ չեն առաջանում (գործարար հարաբերություն չի հաստատվում):

**Գործարար հարաբերություն** - Ընկերության կողմից հաճախորդին մատուցվող պարբերական ծառայություններն են, որոնք չեն սահմանափակվում մեկ կամ մի քանի միանգամյա գործարքներով: Գործարար հարաբերությունը չի ներառում Ընկերության այն գործունեությունը, որի շրջանակներում Ընկերությունը սեփական կարիքների համար իրականացնում է տվյալ տեսակի հաշվետվություն տրամադրող անձանց համար օրենքով սահմանված գործունեությունից տարբեր այլ գործունեություն:

**Լիազորված անձ** - Հաճախորդի հանձնարարությամբ և հաճախորդի անունից գործարքի կատարման կամ գործարար հարաբերությունում որոշակի իրավաբանական կամ փաստացի գործողություններ իրականացնելու լիազորություն ունեցող, այդ թվում՝ լիազորագրով կամ օրենքով սահմանված այլ հիմքով հաճախորդի տված լիազորությունների հիման վրա ներկայացուցչություն իրականացնող անձը, ինչպես նաև այն անձը, որը չունի լիազորագիր, սակայն փաստացի հանդես է գալիս հաճախորդի անունից կամ հանձնարարությամբ, կամ հաճախորդի հաշվին կամ հոգուտ հաճախորդի կատարում է փաստացի գործողություններ:

**Քաղաքական ազդեցություն ունեցող անձ** - պետական, քաղաքական կամ հանրային բնույթի, ինչպես նաև միջազգային կազմակերպությունում նշանակալից գործառույթներ իրականացրած կամ իրականացնող անձն է (այդ թվում՝ նրա ընտանիքի անդամը կամ նրա հետ սերտորեն փոխկապակցված անձը): Ընդ որում, քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը չի ընդգրկում միջին և ցածր դասի գործառույթներ իրականացնող անձանց: Քաղաքական ազդեցություն ունեցող անձինք են մասնավորապես՝

ա. պետության ղեկավարները, կառավարության ղեկավարները, նախարարները և նախարարի տեղակալները,

բ. խորհրդարանի անդամները,

գ. բարձրագույն ատյանի դատարանի, սահմանադրական դատարանի կամ այլ բարձր դատական ատյանների դատավորները, անդամները, որոնց որոշումները բողոքարկման ենթակա չեն, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներով պայմանավորված բողոքարկման դեպքերի,

դ. կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի անդամները,

ե. դեսպանները, գործերի հավատարմատարները և զինված ուժերի բարձրաստիճան սպաները,

զ. քաղաքական կուսակցության պաշտոնատար անձինք,

է. պետական սեփականություն հանդիսացող կազմակերպության վարչական, կառավարման կամ վերահսկողական մարմինների անդամները,

ը. տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները,

թ. միջազգային կազմակերպության ղեկավարները, ղեկավարի տեղակալները, խորհրդի անդամները կամ կառավարչական կամ վերահսկողական այլ համանման գործառույթներ իրականացնող մարմինների անդամները:

**Կենսական շահերի կենտրոն** - Այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Ընտանեկան կամ տնտեսական շահ է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անձի բնակելի տունը (բնակարանը), որտեղ բնակվում է անձը կամ նրա ընտանիքը, և որտեղ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

**Հաճախորդ** - համարվում է Ընկերության հետ գործարար հարաբերություններ հաստատող կամ այդպիսի հարաբերությունների մեջ գտնվող անձը, ինչպես նաև այն անձը, որն առաջարկում է Ընկերությանը կնքել միանգամյա գործարք կամ մատուցել գործարքի կատարմանն ուղղված այլ ծառայություններ:

**Հաճախորդի գործարար բնութագիր** - Հաճախորդի եկամուտի աղբյուրների, գործունեության բնույթի, ազդեցության ու նշանակության, գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների առկա ու ակնկալվող շարժի, ծավալների և ոլորտների, լիազորված անձանց և իրական շահառուների առկայության, ինքնության ու փոխկապակցվածության բնույթի վերաբերյալ Ընկերության կողմից հավաքագրված տեղեկությունների (պատկերացումների) ամբողջությունը:

**Բարձր ռիսկային գործարքներ կամ գործարար հարաբերություններ** – «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև սույն Կանոնակարգով սահմանված այնպիսի չափանիշներ, որոնք վկայում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման բարձր հավանականության մասին, այդ թվում՝

1) քաղաքական ազդեցություն ունեցող և նրանց հետ փոխկապակցված անձանց կողմից և նրանց հետ իրականացվող գործարքները,

2) ըստ ներկայացնողի արժեթղթերով, այդ թվում՝ ըստ ներկայացնողի չեկային գրքույկներով իրականացվող գործարքները,

3) օֆշորային տարածքներում իրականացվող գործարքները, ինչպես նաև ներքոհիշյալ անձինք, գործարքները և հնարավոր իրավիճակները՝

ա) օֆշորային երկրում կամ տարածքում գրանցված (գործող կամ բնակվող) իրավաբանական կամ ֆիզիկական անձ հաճախորդը և նրա հետ կապված գործարքները;

բ) հաճախորդի գործարար հարաբերության կամ միանգամյա գործարքի կապը այնպիսի պետությունների (տարածքների) հետ, որտեղ չեն կիրառվում կամ ոչ պատշաճ են կիրառվում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջազգային պահանջները, ինչպես նաև ՄԱԿ-ի կողմից հրապարակված այն երկրների հետ, որոնց նկատմամբ կիրառվում են պատժամիջոցներ;

գ) բարեգործական և շահույթ չհետապնդող կազմակերպությունները;

դ) ռազմական, ռազմաարդյունաբերական, սպառազինությունների, ատոմային էներգետիկայի, կրիպտոարժույթների, ազնիվ մետաղների և հանքարդյունաբերության, խաղադրույքային և խաղատնային, մեծահասակների ժամանցի, վճարահաշվարկային ծառայությունների ոլորտներում գործունեություն ծավալող ընկերությունները, ինչպես նաև օտարերկրյա հյուպատոսությունները և դեսպանատները;

ե) այն դեպքերը, երբ հայտնի է դառնում, որ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատումը կամ գործարքի կատարումը մերժվել է այլ ֆինանսական հաստատության կողմից;

զ) Լիազոր մարմնի Խորհրդի կողմից և միջազգային փորձի արդյունքում առաջացած տիպային օրինակները:

Եթե գործարքը կամ հաճախորդը համապատասխանում է բարձր ռիսկի գործարքների չափանիշներին, ապա տեղեկատվություն Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը տեղեկատվության տրամադրման ձևի միջոցով այդ մասին պարտավոր է մինչև գործարքի իրականացումը անմիջապես տեղյակ պահել Ներքին դիտարկումների մարմնին:

**Միջին ռիսկի չափանիշ** - Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով, սույն Կանոնակարգով սահմանված այդպիսի չափանիշներ են հանդիսանում հետևյալ անձինք, դեպքերը կամ օբյեկտները՝

ա) Նույն հաճախորդի հետ մեկ և ավելի անգամ կատարվելիք միանգամյա գործարքները;

բ) Նոր հաճախորդների հետ կնքված պայմանագրերը

գ) Այն գործարքները, որոնցում գործող գործարքի կողմերի, լիազորված անձանց և իրական շահառուների անունները չեն գտնվում ահաբեկիչների ցուցակում:

**Ցածր ռիսկի չափանիշ** - Օրենքով, ՀՀ ԿԲ-ի նորմատիվ իրավական ակտերով, Ընկերության համապատասխան ներքին ակտով սահմանված այնպիսի չափանիշներ, որոնք վկայում են փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման ցածր հավանականության մասին, այդ թվում՝

- ՓԼ/ԱՖ դեմ պայքարի տեսանկյունից արդյունավետորեն վերահսկվող ֆինանսական հաստատությունները,
- պետական մարմինները կամ պետական սեփականություն հանդիսացող կազմակերպությունները:

**Գործարար հարաբերության կամ գործարքի կասեցում** - Օրենքով սահմանված կարգով կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի առարկա ֆինանսական միջոցների կամ այլ գույքի փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելք

**Գործարար հարաբերության կամ գործարքի իրականացման մերժում** - Օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի կատարման համար նախատեսված գործողությունների չիրականացում.

**Գույքի սառեցում** - Օրենքով սահմանված կարգով ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց ֆինանսական միջոցների փաստացի և իրավաբանական շարժի ժամկետային արգելքն է, այդ թվում՝ այդ գույքի ուղղակի կամ անուղղակի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման արգելքը, ինչպես նաև որևէ գործարար հարաբերության (ներառյալ՝ ֆինանսական ծառայությունների) կամ միանգամյա գործարքների հաստատման կամ իրականացման արգելքը:

**Ցանկ** - ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի, ԱՄՆ արտաքին ակտիվների վերահսկման գրասենյակի (OFAC) ի, Մեծ Բրիտանիայի և ԵՄ ահաբեկիչները և պատժամիջոցների ցանկերը

### **ԳԼՈՒԽ 3. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**3.1.** Ընկերությունը Օրենքով, իրավական այլ ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում իր հաճախորդի կողմից իրականացվող կասկածելի գործարար հարաբերությունները և գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ, ինչպես նաև կատարում է Օրենքով սահմանված այլ պարտականություններ:

**3.2.** Ընկերությունը Օրենքով, իրավական այլ ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված կարգով Լիազոր մարմինն է ներկայացնում փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման



վերաբերյալ՝ Օրենքով, դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված տեղեկությունները, այդ թվում օրենքով սահմանված գաղտնիք պարունակող տեղեկությունները:

**3.3** Սպասարկող ստորաբաժանումները պարտավոր են սույն Կանոնակարգով սահմանված միջոցներ ձեռնարկել Ընկերության հաճախորդների կամ երրորդ անձանց կողմից իրականացվող կասկածելի գործարքները բացահայտելու և կանխելու ուղղությամբ:

**3.4** Սպասարկող ստորաբաժանումների աշխատակիցներն իրավունք չունեն այլ անձանց, ինչպես նաև այն անձին, որի վերաբերյալ տեղեկություն է տրամադրվում Ընկերության Ներքին դիտարկումների մարմնին, հայտնելու տեղեկության տրամադրման փաստի մասին:

**3.5** Ընկերությունը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին Օրենքով և սույն Կանոնակարգով նշված տեղեկությունները տրամադրում է բացառապես «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

**3.6** Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցը, Լիազոր մարմնին է տրամադրում հետևյալ գործարքներից ցանկացածի վերաբերյալ հաշվետվություն.

- գործարքներ, որոնց արժեքը գերազանցում է 20 միլիոն դրամը.
- Կասկածելի գործարքները կամ գործարար հարաբերությունները՝ անկախ գումարի չափից

**3.7** Անկախ գումարային մեծությունից՝ տեղեկացման ենթակա գործարքներ չեն համարվում.

**3.7.1** Հայաստանի ֆոնդային բորսայում կատարված գործարքները

**3.7.2** միջբանկային շուկայում կատարվող գործարքները,

**3.7.3** Այն գործարքները, որոնց երկու կողմն էլ հանդիսանում են ՀՀ ԿԲ կողմից վերահսկվող անձինք

**3.8** Ընկերության Ներքին դիտարկումների մարմինն իրականացնում է Սպասարկող ստորաբաժանումների կողմից ներկայացված պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների ամփոփումը, պահպանումը, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ ակտերի և սույն Կանոնակարգի համաձայն՝ Ընկերության գործադիր տնօրենին, Ընկերության Խորհրդին (առկայության դեպքում) և Լիազոր մարմնին հաշվետվությունների տրամադրումը:

**3.9** Ներքին դիտարկումների մարմինն պարտավոր է ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս քան եռամսյակը մեկ անգամ իրականացնել Ընկերության կողմից կատարված ֆինանսական գործառնությունների համապատասխանության ուսումնասիրություններ՝ «Փողերի լվացման և

ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի, նշված օրենքի հիման վրա ընդունված իրավական ակտերի և սույն Կանոնակարգի պահանջներին՝ չխոչընդոտելով տեղեկատվություն տրամադրող ստորաբաժանումների բնականոն գործունեությանը:

**3.10** Ներքին դիտարկումների մարմինն Ընկերության համապատասխան աշխատողներին պարզաբանումներ է տալիս փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված աշխատանքների իրականացման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ:

**3.11** Կանոնակարգի պահանջների պատշաճ կատարման նպատակով Սպասարկող ստորաբաժանումների ղեկավարները և պատասխանատու աշխատողները համագործակցում են Ներքին դիտարկումների մարմնի հետ:

#### **ԳԼՈՒԽ 4. ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿԱՄ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**4.1.** Գործարար հարաբերությունը կամ գործարքը կարող է համարվել կասկածելի, եթե՝

**4.1.1.** հաճախորդը գործարքն իրականացնող աշխատակցին (Ընկերությանը) առաջարկում է կնքել (հաստատել) կամ նրա հետ կնքում (հաստատում) է այնպիսի գործարք (գործարար հարաբերություն), որը թեկուզև համապատասխանում է օրենքների և իրավական այլ ակտերի պահանջներին, սակայն տվյալ գործարքով (գործարար հարաբերությամբ) հնարավոր չէ պարզել հաճախորդի ինքնությունը կամ ստանալ տվյալ գործարքի (գործարար հարաբերության) կնքման կամ իրականացման համար Ընկերության համար սույն Կանոնակարգով և/կամ Օրենքով նախատեսված տեղեկություններ:

**4.1.2.** Ընկերության (գործարք իրականացնող աշխատակցի) համար ակնհայտ է դառնում, որ առաջարկվող կամ կնքված գործարքի (գործարքների) արժեքը չի գերազանցում սույն Կանոնակարգի 3.5.1. կետով նախատեսված հաշվետվության տրամադրման համար անհրաժեշտ սահմանաչափը միայն այն պատճառով, որ հաճախորդը ցանկանում է խուսափել Ընկերության կողմից այդ գործարքի վերաբերյալ հաշվետվության տրամադրումից:

**4.1.3.** Հաճախորդի տվյալները (անունը, ազգանունը, անվանումը և այլն) առկա են Ընկերության ՓԼ/ԱՖ տվյալների ընդհանուր բազայում,

**4.1.4.** Հաճախորդը կատարում է խոշոր գումարների ներգրավմամբ գործարքներ, որոնք նրա եկամուտներին չեն համապատասխանում,

**4.1.5.** Հաճախորդն անտարբեր է գործարքի էական պայմանները սահմանելու նկատմամբ (ընդունելի է ցանկացած պայման),

**4.1.6.** Հաճախորդը ակնհայտ մտահոգություն է ցուցաբերում Ընկերության հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին կանոնների և դրանց հնարավոր կիրառման կապակցությամբ.

ա) հաճախորդը գործարքն իրականացնող աշխատակցին հարցափորձ է անում, թե կարող են արդյո՞ք իր ներկայացված փաստաթղթերը համարվել կասկածելի, կամ պահանջում է խորհրդատվություն՝ իր անվամբ հաշվետվություն ուղարկելուց խուսափելու համար,

բ) տեղեկանալով, որ գումարը գերազանցում է սույն Կանոնակարգով սահմանված գումարային շեմը, հաճախորդը փորձում է փոքրացնել գործարքի գումարի չափը,

գ) հաճախորդը չի ցանկանում շարունակել կամ անհանգստանում է այն բանից հետո, երբ տեղեկանում է, որ գործարքը գերազանցում է սույն Կանոնակարգով սահմանված գումարային շեմը:

դ) հաճախորդը ցուցաբերում է չհիմնավորված շտապողականություն գործարքի իրականացման ընթացքում.

**4.1.7.** Եթե դրամական փոխանցումները կատարվում են կամ ստացվում են օֆշորային երկրներից, որտեղ, համաձայն Ընկերության հայտնի դարձած տեղեկատվության, բացակայում են, փողերի լվացման դեմ պայքարի կանոնակարգեր:

**4.2.** Լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներով կարող են սահմանվել գործարքը կամ գործարար հարաբերությունները կասկածելի համարելու՝ սույն Կանոնակարգի 4.1 կետում չնշված այլ հիմքեր, ինչպես նաև կասկածելի գործարքի հիմքերը որոշելու այլ չափանիշներ, որոնց հիման վրա Ընկերությունը (գործարքն իրականացնող աշխատակիցը) տվյալ գործարքը (գործարար հարաբերությունը) ճանաչում է կասկածելի:

**4.3.** Ընկերությունը կարող է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն տրամադրել Լիազոր մարմնին նաև այն դեպքերում, երբ այդ գործարքի կամ գործարար հարաբերության կասկածելիությունը չի բխում Օրենքից, Լիազոր մարմնի ներկայացրած ուղեցույցներից, սույն Կանոնակարգով սահմանված կասկածելի գործարքի հիմքերից և չափանիշներից, սակայն դրա կատարման տրամաբանությունը և շարժը (դինամիկան) հիմք են տալիս ենթադրելու, որ այն իրականացվում է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակով:

**4.4.** Ընկերության (գործարքն իրականացնող աշխատակցի) կողմից գործարքը կամ գործարար հարաբերությունը, այդ թվում՝ դրանց կատարման փորձը պետք է որակվի որպես կասկածելի և դրա մասին սույն Կանոնակարգով սահմանված հաշվետվությունն անմիջապես

տրամադրվի Լիազոր մարմնին՝ կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության հիմքերի կամ չափանիշների հայտնաբերման դեպքում:

**4.5.** Գործարար հարաբերությունը կամ գործարքը պետք է համարվի կասկածելի՝ անկախ սույն Կանոնակարգի 4.4 կետի դրույթից, եթե կասկածվում է կամ բավարար հիմքեր կան կասկածելու, որ գործարար հարաբերությունում կամ գործարքում ներգրավված են այնպիսի ֆինանսական միջոցներ կամ այլ գույք, որոնք կապված են, կամ առկա է մտադրություն դրանք օգտագործել ահաբեկչական կազմակերպությունների կամ անհատ ահաբեկիչների կողմից՝ ահաբեկչական նպատակներով:

## **ԳԼՈՒԽ 5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՏՇԱՃ (ՀԱՎԵԼՅԱԼ ԵՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ) ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

**5.1.** Ընկերությունը հաճախորդի հետ գործարար հարաբերություն կամ միանգամյա գործարք կատարելուց առաջ իրական շահառուի առկայությունը պարզվում է հաճախորդի հայտարարության հիման վրա (հավելված 2): Գործարար հարաբերության ընթացքում սույն կետով նախատեսված հայտարարության ձևը լրացվում (փոփոխվում) է միայն իրական շահառուի ի հայտ գալու կամ իրական շահառուի փոփոխության դեպքում:

Հաճախորդի նույնականացման ընթացքում ձեռք բերված տեղեկությունները պետք է ստուգվեն հաճախորդին Սպասարկող ստորաբաժանման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև Ներքին դիտարկումների մարմնի և այլ ստորաբաժանումների ու աշխատակիցների կողմից: Ստուգումը պետք է ներառի այն տեղեկությունների ուսումնասիրումը, որոնք կբավարարեն հաճախորդի իրական ինքնությունը պարզելու համար: Այդ նպատակով Սպասարկող ստորաբաժանման կողմից կարող են օգտագործվել ինչպես փաստաթղթային, այնպես էլ ոչ փաստաթղթային ստուգման մեթոդներ:

Գործարար հարաբերությունում հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս Սպասարկող ստորաբաժանումը, իսկ անհրաժեշտության դեպքում Ներքին դիտարկումների մարմինը այլ ստորաբաժանումների ու աշխատակիցների հետ նվազագույնը՝

- 1) ստուգում է գործարքների միջև առկա փոխադարձ կապը, բացահայտում այդ կապի հնարավոր սխեմաները, ինչպես նաև որոշում, թե ինչ նպատակ ունեն նշված գործարքները.
- 2) ստուգում է, թե արդյոք իրականացվող գործարքների էությունը համապատասխանում է հաճախորդի կողմից իրականացվող գործունեության տեսակներին.

- 3) հավաքագրում է հաճախորդի եկամտի աղբյուրների վերաբերյալ հնարավոր տեղեկություններ.
- 4) համադրում է հաճախորդի տարբեր գործարքներով շրջանառվող միջոցների աղբյուրները, շարժը, ծավալները.
- 5) գնահատում է գործարքում կամ գործարար հարաբերությունում առկա ՓԼ/ԱՖ հնարավոր ռիսկերը՝ կասկածելի գործարքների ու գործարար հարաբերությունների հիմքերի և չափանիշների հետ համադրություն իրականացնելու միջոցով.
- 6) ճշտում է որոշակի միավոր ժամանակահատվածում գործարքների տեսակները, հաճախականությունը և ժամանակագրությունը.
- 7) իրականացնում է գործարքի կողմերի, ստացողի, իրական շահառուի, ինչպես նաև լիազորված անձի հաշվառում և իրականացնում համադրում հաճախորդների փոխկապակցվածությունը պարզելու նպատակով.
- 8) առավել ամբողջական ու խորացված ստուգում է հաճախորդի հետ գործարար հարաբերություններ հաստատելիս պահանջվող փաստաթղթերի (տեղեկությունների) իսկությունը, օրինակ, պահանջելով հիմնավորող այլ փաստաթղթեր (տեղեկություններ).
- 9) պահանջում է հաճախորդի ակտիվների և միջոցների ծագման աղբյուրների վերաբերյալ տեղեկություններ.
- 10) տվյալների բազաներով կատարում է հաճախորդի, գործարար հարաբերության և գործարքի վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրություն.
- 11) հաշվետվություն տրամադրող այլ անձանց, այդ թվում՝ օտարերկրյա գործընկերներին հարցումներ է կատարում՝ ճշտելու հաճախորդի, նրա հետ գործարար հարաբերությունների և միանգամյա գործարքների վերաբերյալ տեղեկությունները.
- 12) հաշվի են առնում Օրենքի և Լիազոր մարմնի խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի այլ պահանջներ:

5.2. Ընկերությունը հաճախորդին նույնականացնում և նրա ինքնությունը ստուգում է պետական իրավասու մարմնի և մասնագիտացված իրավասու կազմակերպությունների տված արժանահավատ ու վավեր փաստաթղթերի և այլ տեղեկությունների հիման վրա:

5.3. Ֆիզիկական անձ հաճախորդին, լիազորված անձին կամ իրական շահառուին նույնականացնելու նպատակով Ընկերությունը հաճախորդից պետք է պահանջի հետևյալ փաստաթղթերը.

- 1) Անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- 2) Անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում գրանցման համարը և ՀՎՀՀ-ն կամ

- համարժեք այլ համարները ներառող փաստաթղթ(եր)ի պատճեն(ներ)ը,
- 3) Հայտարարություն իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ լիազոր մարմնի սահմանած ձևով,
  - 4) Գրություն բնակության և հաշվառման վայրի մասին, եթե դրանք նշված չեն ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
  - 5) Բնակության վայրը հաստատող փաստաթուղթ (կոմունալ կամ այլ ծառայության վճարման հաշիվ, բանկային հաշվից տեղեկանք, քաղվածք կամ ցանկացած այլ փաստաթուղթ, որում կերևա, որ հաճախորդը բնակվում է նշված հասցեում),
  - 6) Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,
  - 7) Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ,
  - 8) Ցանկացած այլ փաստաթուղթ, որը ներքին դիտարկումների մարմինը հարկ կհամարի պահանջել:

5.4. Իրավաբանական անձ հաճախորդին կամ լիազորված անձին նույնականացնելու նպատակով Ընկերությունը հաճախորդից պետք է պահանջի հետևյալ փաստաթղթերը.

- 1) Պետական գրանցումը հավաստող փաստաթղթի վերջնական տարբերակի պատճենը,
- 2) ՀՎՀՀ-ն կամ համարժեք այլ համարը ներառող փաստաթղթի պատճենը,
- 3) Հիմնադիր փաստաթղթի վերջնական տարբերակի պատճենը,
- 4) Առանց լիազորագրի հաճախորդի անունից հանդես գալու իրավասություն ունեցող ֆիզիկական անձանց ցանկը և նրանց նշանակումը հավաստող փաստաթղթերի պատճենները
- 5) Հաճախորդի անունից լիազորագրի հիման վրա գործող լիազորված ֆիզիկական անձանց ցանկը և նրանց լիազորությունները հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները,
- 6) Հայտարարություն իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ լիազոր մարմնի սահմանած ձևով,
- 7) Սույն կետի 4-6 ենթակետերում նշված անձանց համար Կանոնների 5.3. կետով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ 5.3. կետի 3-րդ ենթակետի,
- 8) Հաճախորդի թողարկած բաժնային արժեթղթերի քսան և ավելի տոկոսին տիրապետող անձանց ցանկը,
- 9) Գրություն կենսական շահերի կենտրոնի մասին, եթե հաճախորդն օտարերկրյա անձ

է և կենսական շահերի կենտրոնը նշված չէ ներկայացված այլ փաստաթղթերից որևէ մեկում,

- 10) Ընկերության որևէ ներքին իրավական ակտով պահանջվող ցանկացած այլ փաստաթուղթ,
- 11) Ցանկացած այլ փաստաթուղթ, որը ներքին դիտարկումների մարմինը հարկ կհամարի պահանջել:

5.5. Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների դեպքում Ընկերությունը հաճախորդի իրական շահառուին պարզելու նպատակով պետք է լիարժեք տեղեկատվություն ունենա այդ իրավաբանական անձի մասնակիցների և կառավարման մարմինների լիազորությունների վերաբերյալ:

5.6. Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով հաճախորդից ստացվող փաստաթղթերը և տեղեկությունները կարող են լինել հայերեն, ռուսերեն կամ անգլերեն: Վերոնշյալ լեզուներից տարբերվող լեզվով ներկայացվող փաստաթղթերը պետք է նուտարական կարգով թարգմանված լինեն հայերեն:

5.7. Օտարերկրյա անձանց կողմից հայերենից տարբերվող լեզվով ներկայացվող փաստաթղթերը պետք է ներկայացվեն ապոստիլով կամ հյուպատոսական վավերացմամբ, եթե առանց ապոստիլի կամ հյուպատոսական վավերացման ներկայացնելու վերաբերյալ առկա չէ Ընկերության համաձայնությունը:

5.8. Օտարերկրյա ֆինանսական հաստատությունների հետ թղթակցային կամ համանման այլ հարաբերությունների ընթացքում Ընկերությունը, ի լրումն հաճախորդի պատշաճ ուսումնասիրության համար Օրենքով և Կանոններով սահմանված պահանջների, պետք է՝

- 1) հավաքի բավարար տեղեկություններ, որպեսզի ամբողջությամբ պարզի օտարերկրյա ֆինանսական հաստատության գործունեության բնույթը և, հիմք ընդունելով հրապարակային ու այլ արժանահավատ տեղեկությունները, գնահատի հաստատության գործարար համբավն ու դրա նկատմամբ իրականացվող վերահսկողության որակը, ներառյալ այն, թե արդյոք այդ ֆինանսական հաստատությունը ներգրավված է եղել կամ տվյալ պահին ներգրավված է փողերի լվացման կամ ահաբեկչության ֆինանսավորման հետ կապված քրեական հետապնդման կամ որևէ այլ վարույթի մեջ,
- 2) գնահատի օտարերկրյա ֆինանսական հաստատության կողմից իրականացվող՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ընթացակարգերը, հավաստիանալու համար, որ դրանք բավարար են և արդյունավետ, թղթակցային և համանման այլ հարաբերություն հաստատելուց առաջ ստանա ավագ ղեկավարության հավանությունը,

- 4) փաստաթղթավորի օտարերկրյա ֆինանսական հաստատություններից յուրաքանչյուրի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համապատասխան պարտականությունները, եթե դրանք հստակորեն հայտնի չեն,
- 5) հավաստիանա, որ տարանցիկ հաշիվների դեպքում օտարերկրյա ֆինանսական հաստատությունը՝
  - ա) իրականացրել է ֆինանսական հաստատության հաշիվներին ուղղակի հասանելիություն ունեցող հաճախորդների պատշաճ ուսումնասիրություն և հարցման դեպքում կարող է տրամադրել այդ հաճախորդների պատշաճ ուսումնասիրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները,
  - բ) թույլ չի տալիս կեղծ բանկերի կողմից իր հաշիվների օգտագործումը:

5.7. Սպասարկող ստորաբաժանումը և Ներքին դիտարկումների մարմինը հաճախորդի հավելյալ ուսումնասիրություն իրականացնում է միայն բարձր ռիսկի չափանիշների առկայության դեպքում, միջին ռիսկի առկայության դեպքում իրականացվում է հաճախորդի պարզեցված ուսումնասիրության և հավելյալ ուսումնասիրության այն քայլերը, որոնք կբավարարեն անհրաժեշտ տեղեկատվության ձեռք բերման համար, իսկ պարզեցված ուսումնասիրությունը կարող է իրականացնել նաև ցածր ռիսկի չափանիշների դեպքում:

## **ԳԼՈՒԽ 6. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 6.1** Սպասարկող ստորաբաժանումները հաճախորդների հետ պայմանագրեր կնքելիս կամ հաճախորդի պատվերը կատարելիս առաջնորդվում են Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներով, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, ֆիզիկական անձ հաճախորդի վերաբերյալ պարզում նաև հետևյալ տեղեկությունները՝
- ա) ներդրվող միջոցների ծագման աղբյուրը.
  - բ) հաճախորդի գործունեության բնույթը և ոլորտը.
  - գ) հաճախորդի ռեզիդենտությունը՝ համաձայն «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի.
  - դ) բանկերում նրա ունեցած բանկային հաշիվների մասին տեղեկություններ:

**6.2** Եթե հաճախորդի նույնականացման ժամանակ պարզվում է, որ նրա անունը գտնվում է Ցանկում, ապա այդ մասին տվյալ ստորաբաժանման ղեկավարը կամ աշխատողը պարտավոր են անմիջապես տեղյակ պահել Ներքին դիտարկումների մարմնին և գործադիր տնօրենին:

Եթե հաճախորդի նույնականացման ժամանակ պարզվում է, որ հաճախորդը քաղաքական ազդեցություն ունեցող անձ է, ապա Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու



աշխատակիցը նախքան նրա հետ համագործակցություն սկսելը, շարունակելը կամ դադարեցնելը Ներքին դիտարկումների մարմնին պարտավոր է տեղյակ պահել այդ մասին, որը պետք է միջոցառումներ ձեռնարկի նրա եկամուտների աղբյուրը պարզելու համար՝ որից հետո գործադիր տնօրենի հավանությունը ստանալով միայն թույլատրում է ստորաբաժանման ղեկավարին սկսել/դադարեցնել կամ եթե դարձել է քաղաքական ազդեցություն անձ, ապա շարունակել համագործակցությունը: Քաղաքական ազդեցություն ունեցող անձի առկայության դեպքում Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը պետք է իրականացնի գործարար հարաբերությունների ընթացիկ հավելյալ ուսումնասիրություն:

**6.3.** Հաճախորդի, պարտատիրոջ կամ այլ անձի կողմից որպես գործակալ, ներկայացուցիչ կամ լիազորված անձ՝ մեկ այլ անձի հանդես գալու դեպքում, տեղեկատվություն տրամադրող ստորաբաժանումները պարտավոր են պարզել գործառնության իրական շահառուին, ինչպես նաև հավաքագրել գործակալի, ներկայացուցչի կամ լիազորված անձի վերաբերյալ սույն Կանոնակարգով պահանջվող տեղեկությունները:

**6.4.** Սույն Կանոնակարգի 6.3 կետով նշված գործակալի, ներկայացուցչի կամ լիազորված անձի վերաբերյալ Սպասարկող ստորաբաժանումների կողմից տեղեկությունների ուսումնասիրությունը պարտադիր չէ, եթե որպես գործակալ, ներկայացուցիչ կամ լիազորված անձ հանդես է գալիս ֆինանսական շուկաներում որոշակի ֆինանսական գործառնություններ իրականացնելու համար լիցենզիա ունեցող անձը:

**6.5.** Այն դեպքում, երբ հաճախորդը, պարտատերը կամ պայմանագրի մյուս կողմը օֆշորային երկրում կամ տարածքում (համաձայն Լիազոր մարմնի կողմից հաստատված օֆշորային տարածքների ցանկի) գրանցված և/կամ գործող իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կամ ֆիզիկական անձ է, ապա տվյալ ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը ճշտում է այդ անձի կենսական շահերի կենտրոնը և եկամտի աղբյուրները՝ պահանջելով համապատասխան փաստաթղթեր:

**6.6.** Սպասարկող ստորաբաժանումների պատասխանատու աշխատակիցները պարտավոր են պահանջվող փաստաթղթերին կից գրանցել և պահպանել նաև սույն Կանոնակարգով պահանջվող տեղեկությունների ցանկացած փոփոխություն:

**ԳԼՈՒԽ 7. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՎԿՈՒՄՆԵՐԸ,  
ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ (ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ**

**ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ԱՀԱՐԵԿՉՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ՍԱՌԵՑՈՒՄԸ**

7.1. Սպասարկող ստորաբաժանումները ֆինանսական գործառնություններ կարող են իրականացնել միայն սույն Կանոնակարգով պահանջվող տեղեկությունները ստանալուց և գրառելուց հետո, և պարտավոր են մերժել գործարք կատարելու վերաբերյալ հաճախորդի կամ ցանկացած գործարքի կողմի դիմումը, եթե վերջիններս չեն ներկայացնում կամ հրաժարվում են ներկայացնել սույն Կանոնակարգի համաձայն պարտադիր տրամադրման ենթակա տեղեկությունները և փաստաթղթերը:

7.2. Սպասարկող ստորաբաժանումները պարտավոր են մերժել գործարք կատարելու վերաբերյալ հաճախորդի կամ ցանկացած գործարքի կողմի դիմումը, եթե Ընկերությանը դիմող և կամ գործարքի կողմ հանդիսացող անձիք ընդգրկված են սույն Կանոնակարգի 3.7. կետում նշված ցուցակում:

7.3. Սպասարկող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը բարձր և միջին ռիսկի չափանիշներին համապատասխանող գործարքներ կամ հաճախորդներ ունենալու դեպքում մինչև այդ աշխատանքային օրվա ավարտը պետք է փաստաթղթեր պահանջելու միջոցով պարզի անհրաժեշտ տեղեկատվությունը: Եթե մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը անհրաժեշտ տեղեկատվությունը չի պարզվում, ապա տեղեկատվություն տրամադրող ստորաբաժանման պատասխանատու աշխատակիցը գործարքը կամ հաճախորդը որակում է, որպես բարձր ռիսկի չափանիշ ունեցող և տեղեկացնում Ներքին դիտարկումների մարմնին:

7.4. Կասկածելի և բարձր ռիսկի չափանիշներին պատկանող գործարքի կամ հաճախորդի առկայության դեպքում, Ներքին դիտարկումների մարմինը ժամանակավոր կասեցնելով գործարքը իրականացնում է ներքոնշյալ գործողությունները՝

- պարզում է անհրաժեշտ տեղեկատվություն (գործարքի բնույթը, չափանիշները):
- Եթե մինչև գործարքի հայտի ընդունմանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը չի հաջողվում պարզել անհրաժեշտ տեղեկատվությունը (բնույթը, չափանիշները), ապա Ներքին դիտարկումների մարմինը դիմում է գործադիր տնօրենին այդ գործարքը կասեցնելու և Լիազոր մարմնին կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու առաջարկությամբ:
- Եթե գործարքի հայտի ընդունման հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ընթացքում գործադիր տնօրենի կողմից Ներքին դիտարկումների մարմնի կատարած առաջարկության մերժման վերաբերյալ անհրաժեշտ հիմնավորումներ չեն արվում, Ներքին դիտարկումների մարմինը գործարքը որակում է որպես կասկածելի և մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը,

իսկ դրա անհնարինության դեպքում մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 12:00 կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնում Լիազոր մարմնին:

**7.5.** Ընկերությունը վերացնում է գործարքի կասեցումը կամ դադարեցումը, եթե հաճախորդի կողմից ներկայացվել են Ընկերության համար ընդունելի բացատրություններ և պարզաբանումներ, որոնք ակնհայտ հիմնավորում են, որ տվյալ գործարքը կասկածելի չէ՝ այդ մասին տեղեկացնելով Լիազոր մարմնին:

**7.6.** Ընկերությունը գործառնությունների դադարեցման կամ կասեցման, ինչպես նաև գործառնությունների դադարեցման կամ կասեցման վերացման մասին Լիազոր մարմնին հայտնում է վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

**7.7.** Ընկերությունը Լիազոր մարմնի որոշման հիման վրա պարտավոր է դադարեցնել կամ կասեցնել այն հաշիվներով գործառնությունները, որոնք կասկածվում են հանցավոր ճանապարհով ստացված միջոցների շրջանառության կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ:

**7.7** Ընկերության գործադիր տնօրենը իրավունք ունի փողերի լվացման կասկածի առկայության դեպքում մինչև 5 օրով, իսկ Ցանկում առկա հաճախորդների դեպքում պարտավոր է 5 օրով կասեցնել այդ գործարքը կամ գործարար հարաբերությունը և այդ մասին անմիջապես Լիազոր մարմնին ներկայացնել այդ գործարքի վերաբերյալ տեղեկատվություն:

**7.8.** Լիազոր մարմնի համապատասխան իրավասու մարմնի որոշման հիման վրա գործառնությունը դադարեցված կամ կասեցված լինելու դեպքում, Ընկերությունը վերացնում է կասեցումը կամ դադարեցումը՝ միայն Լիազոր մարմնի որոշման հիման վրա:

**7.9** Ընկերության կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման մասին Լիազոր մարմնին տեղեկացնելու կամ Լիազոր մարմնի կողմից գործարքի կամ գործարար հարաբերության կասեցման պահից 5 օրվա ընթացքում Լիազոր մարմինը որոշում է կայացնում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դեպքերում քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու, կամ քրեական հետապնդման մարմիններին հաղորդում ուղարկելու հիմքերը պարզելու նպատակով կասեցման ժամկետը 5 օրով (բացառիկ դեպքերում՝ 10 օրով) երկարաձգելու կամ կասեցման որոշումը վերացնելու մասին: Սույն մասում նշված ժամկետում Լիազոր մարմնի որոշումը Ընկերությանը չտրամադրելու դեպքում կասեցման մասին որոշումը համարվում է վերացված:

**7.10.** Լիազոր մարմնի որոշումները Ընկերության կողմից ստանալու նույն օրը, գործադիր տնօրենի կարգադրությամբ, տրամադրվում է Ներքին դիտարկումների մարմնին:

7.11. Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում, ինչպես նաև Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ցանկերում ներառված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու ենթակա է սառեցման Ընկերության կողմից:

7.12. Հաճախորդի գույքի սառեցում կարող է իրականացվել նաև լիազոր մարմնի որոշման հիման վրա:

7.13. 7.11. կետում նշված դեպքերում հաճախորդի գույքի սառեցման վերաբերյալ ներքին դիտարկումների մարմինը ընդունում է գրավոր որոշում: Այդ որոշման մասին ներքին դիտարկումների մարմինը տեղեկացնում է ընկերության գործադիր մարմնին:

7.14. Ներքին դիտարկումների մարմնի որոշման կամ լիազոր մարմնի որոշման հիման վրա հաճախորդի, նրա միջոցների և այդ միջոցների սառեցման մասին տվյալները գրանցվում են հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:

7.15. Ընկերությունն ահաբեկչության հետ կապված անձանց գույքը սառեցնելու դեպքում գործարքը կամ գործարար հարաբերությունը անմիջապես որակում է կասկածելի և տրամադրում է կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ հաշվետվություն:

7.16. Սառեցման առարկա չի կարող լինել այն գույքը, որը պատկանում է բարեխիղճ երրորդ անձին, այսինքն՝ այն անձին, որը գույքը այլ անձի հանձնելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք օգտագործվելու են կամ նախատեսվում են օգտագործել հանցավոր, ներառյալ՝ ահաբեկչության կամ ահաբեկչության ֆինանսավորման նպատակներով, ինչպես նաև այն անձին, որը գույքը ձեռք բերելիս չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ դրանք ստացվել են հանցավոր ճանապարհով:

7.17. Սառեցումը կարող է վերացվել միայն լիազոր մարմնի կողմից՝ գույքը սխալմամբ սառեցվելու, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից սառեցված գույքի վրա կալանք դնելու դեպքում: Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձանց գույքի սառեցումը նաև վերացվում է, եթե բացահայտվում է, որ այն անձը, որի միջոցները սառեցվել են, հանվել է ահաբեկչության հետ կապված անձանց ցանկից:

7.18. Սառեցման վերացման մասին գրառում է կատարվում հաճախորդների հաշվառման գրանցամատյանում:

**ԳԼՈՒԽ 8. ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԿԱՍԿԱԾԵԼԻ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

**8.1.** Պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքի վերաբերյալ հաշվետվության մեջ նշվում են՝

**8.1.1.** հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի, կասկածելի գործարքի դեպքում՝ նաև իրական շահառուի տվյալները, ներառյալ՝

ա) ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսանալու դեպքում՝ անունը, ազգանունը, բնակության վայրը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, քաղաքացիությունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը և տրամադրման տարին, ամիսը, ամսաթիվը, իսկ անհատ ձեռնարկատիրոջ համար՝ նաև պետական գրանցման վկայականի համարը և հարկ վճարողի հաշվառման համարը,

բ) իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի համարը, իսկ ֆինանսական հաստատությունների կողմից հաշվետվության ներկայացման դեպքում՝ նաև հարկ վճարողի հաշվառման համարը, գ) հաճախորդի բանկային հաշվի համարը.

**8.1.2.** գործարքի առարկայի նկարագրությունը.

**8.1.3.** գործարքի գինը (արժեքը).

**8.1.4.** գործարքի կնքման ամսաթիվը:

**8.2.** Կասկածելի գործարար հարաբերության կամ գործարքի մասին հաշվետվության մեջ նշվում են նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի համարելու հիմքը, չափանիշը, նկարագրությունը, ինչպես նաև գործարքը կամ գործարար հարաբերությունը կասեցված, մերժված լինելու կամ ահաբեկչության հետ կապված անձանց եկամուտները սառեցված լինելու հանգամանքը:

**8.3.** Հաշվետվությունները պետք է ներկայացվեն ըստ պահանջվող կարգի, Ընկերության պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ:

**8.4.** Գործարար հարաբերությունում կամ գործարքում հաճախորդի, լիազորված անձի, գործարքի մյուս կողմի կարգավիճակում պետական մարմին կամ տեղական ինքնակառավարման մարմին հանդես գալու դեպքում հաշվետվության մեջ նշվում է միայն այդ մարմնի անվանումը:

**8.5.** Հաշվետվության տրամադրումը կարող է կատարվել թղթային, իսկ Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքում՝ նաև (կամ) էլեկտրոնային եղանակով:

**ԳԼՈՒԽ 9. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԴԵՐՆ ՈՒ  
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ  
ՄԱՐՄՆԻ ՀԵՏ**

9.1. Ներքին աուդիտորը, Օրենքով սահմանված կարգով, տարեկան առնվազն մեկ անգամ ստուգումներ է իրականացնում՝ հավաստիանալու, որ Ընկերության գործադիր տնօրենն ու Ներքին դիտարկումների մարմինն ապահովում են Ընկերության գործունեության լիարժեք համապատասխանությունն Օրենքի, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերի, սույն Կանոնակարգի և այլ ներքին իրավական ակտերի պահանջներին:

9.2. Ներքին աուդիտորը Խորհրդին (պատճենը՝ Գործադիր տնօրենին) հաշվետվություններ է ներկայացնում ստուգումների արդյունքում ձևավորված իր գնահատականների և բացահայտումների վերաբերյալ, ներառյալ՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով աշխատակիցների ուսուցման ու վերապատրաստման համարժեքության և արդյունավետության վերաբերյալ իր եզրակացությունը:

9.3. Ներքին աուդիտորը ցանկացած ստորաբաժանման ընթացիկ կամ պլանային ստուգման ընթացքում կասկածելի գործարքների կամ փողերի լվացման հավանական սխեմաների, Օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերի հիման վրա (ներքին ու արտաքին) պահանջների խախտումների հայտնաբերման դեպքում, մինչև ստուգման արդյունքների վերաբերյալ փաստաթուղթը համապատասխան իրավասու մարմնին ներկայացնելը, այդ մասին պետք է տեղեկացնի Ներքին դիտարկումների մարմնին՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի անհրաժեշտ միջոցառումներն իրականացնելու նպատակով:

**ԳԼՈՒԽ 10. ՓԼ/ԱՖ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

10.1. Ընկերության Խորհուրդը և Գործադիր տնօրենը պատասխանատու են ՓԼ/ԱՖ կանխարգելման քաղաքականության սահմանման, ներքին արդյունավետ համակարգի ձևավորման և դրա ընդհանուր ու ընթացիկ հսկողության համար:

10.2. ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում Ընկերության Խորհուրդը.

- 1) սահմանում է Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականությունը
- 2) հաստատում է Ընկերության ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Կանոնակարգը,

- 3) հաստատում է ներքին դիտարկումների մարմնի և ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին աուդիտի տարեկան ծրագրերը, դրանց կատարման հաշվետվությունները, ինչպես նաև վերահսկողություն իրականացնում այդ ծրագրերի իրականացման նկատմամբ,
- 4) անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է Ներքին դիտարկումների մարմնի ուսումնասիրություններ, հաստատում է աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված համակարգային թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները և վերահսկում դրանց իրականացումը,
- 5) հսկում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ներքին համակարգի արդյունավետության ուսումնասիրության իրականացումը,
- 6) ստանում և քննարկում է ներքին դիտարկումների մարմնի և (կամ) ներքին աուդիտի հաշվետվությունները ներքին իրավական ակտերի կատարման վիճակի մասին,
- 7) հավանություն է տալիս (կամ մերժում է) Ընկերության գործադիր տնօրենի ներկայացրած Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների թեկնածուների նշանակման (կամ հեռացման) հարցին,

**10.3. ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գործընթացում Ընկերության Գործադիր տնօրենը**

- 1) ապահովում է Խորհրդի կողմից սահմանված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի քաղաքականության և դրա հիման վրա ընդունված ներքին իրավական ակտերի և ընթացակարգերի ամբողջական և արդյունավետ ներդրումն ու դրանց անընդհատ և արդյունավետ իրականացումը,
- 2) կազմակերպում է միջոցառումներ Ընկերության աշխատակիցների կողմից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի Օրենքի, ներքին իրավական ակտերի, ինչպես նաև էթիկայի կանոնների լիարժեք տիրապետումն ապահովելու համար,
- 3) աջակցում և ապահովում է հաճախորդի պատշաճ ուսումնասիրության, այդ թվում՝ պարզեցված կամ հավելյալ ուսումնասիրության, ընթացիկ մոնիտորինգի, ինչպես նաև տեղեկատվության հաշվառման, հավաքագրման ու թարմացման իրականացումը,
- 4) կազմակերպում է Ներքին դիտարկումների մարմնի անհրաժեշտ նյութատեխնիկական ապահովվածությունը,
- 5) Ներքին դիտարկումների մարմնի հետ մեկտեղ մշակում և հաստատում է իր աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում պատշաճ ուսուցման և վերապատրաստման գործընթացը,
- 6) իրականացնում է Ներքին դիտարկումների մարմնի կողմից կատարված ուսումնասիրությունների, աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները,

- 7) Խորհրդի համաձայնությամբ նշանակում և աշխատանքից ազատում է Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարին և աշխատակիցներին,
- 8) Ներքին դիտարկումների մարմնի հետ մեկտեղ ապահովում է իր աշխատակիցների՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում պատշաճ ուսուցումը և վերապատրաստումը,
- 9) կազմակերպում և ապահովում է Ներքին դիտարկումների մարմնի ղեկավարի և աշխատակիցների պարբերական ուսուցումն ու վերապատրաստումը,
- 10) հաստատում է բարձր ռիսկի չափանիշներին համապատասխանող հաճախորդների հետ գործարար հարաբերության կնքումը,
- 11) որոշումներ է կայացնում Ներքին դիտարկումների մարմնի և/կամ Սպասարկող ստորաբաժանումների կողմից բարձրացրած ՓԼ/ԱՖ ոլորտին առնչվող հրատապ հարցերի վերաբերյալ,
- 12) քննարկում և անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավասու մարմնի քննարկմանն է ներկայացնում ՓԼ/ԱՖ ոլորտին առնչվող Ներքին դիտարկումների մարմնի կողմից ներկայացված խնդիրներն ու առաջարկությունները:

**ԳԼՈՒԽ 11. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

11.1. Ներքին դիտարկումների մարմինը ոչ ուշ քան կիսամյակը մեկ անգամ, կիսամյակին հաջորդող ամսում՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում (եթե այլ բան նախատեսված չէ Ընկերության ներքին իրավական ակտերով և/կամ Ընդհանուր ժողովի պահանջով) կազմում և Ընկերության Ընդհանուր ժողովին է ներկայացնում Օրենքով և ներքին իրավական ակտերով սահմանված հաշվետվությունները:

11.2. Ներքին դիտարկումների մարմնի կողմից Ընկերության Ընդհանուր ժողովին ներկայացվող կիսամյակային հերթական հաշվետվությունը նվազագույնը ներառում է.

- 1) պարտադիր տեղեկացման ենթակա գործարքների թիվը,
- 2) կասկածելի գործարքների (գործարար հարաբերությունների) թիվն ու համառոտ նկարագրությունը,
- 3) այն գործարքների և գործարար հարաբերությունների թիվը և ամփոփ նկարագրությունը, որոնց վերաբերյալ իրականացվել են վերլուծություններ, սակայն չեն ներկայացվել որպես կասկածելի գործարքներ կամ գործարար հարաբերություններ,



- 4) կասեցված կամ իրականացումը մերժված գործարար հարաբերությունների և գործարքների թիվը և համառոտ նկարագրությունը,
- 5) կասեցված գործարքների արժեքը,
- 6) սառեցված ֆինանսական միջոցների չափը,
- 7) ՓԼ/ԱՖ դեմ պայքարին առնչվող այլ հարցեր և տեղեկություններ,
- 8) Ընկերության Խորհրդի կողմից պահանջվող այլ տեղեկատվություն:

## **ԳԼՈՒԽ 12. ՆԵՐՔԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՐՄՆԻ ԱՇԽԱՏԱԿԻԳՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ**

**12.1.** Ընկերության Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները նշանակվում և ազատվում են Ընկերության գործադիր տնօրենի կողմից՝ Խորհրդի համաձայնությամբ:

**12.2.** Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները պետք է ունենան բարձրագույն կրթություն և առնվազն 1 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

**12.3.** Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները պետք է Լիազոր մարմնի սահմանած կարգով և մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա անցնեն որակավորում: Որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգումը, այդ թվում՝ համապատասխան քննությունն անցկացվում է Ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցների թեկնածուների և հավակնորդների համար՝ Լիազոր մարմնի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից:

Առանց համապատասխանության որակավորման Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոնին նշանակված անձինք պետք է որակավորվեն նշանակման պահից եռամսյա ժամկետում, եթե այլ բան նախատեսված չէ Օրենքով և ենթաօրենսդրական ակտերով:

**12.4.** Ներքին դիտարկումների մարմնի աշխատակցի պաշտոն առանց որակավորում անցնելու կարող են զբաղեցնել Լիազոր մարմնի կողմից որակավորված աուդիտորները, Համապատասխանության միջազգային ասոցիացիայի համապատասխանության դիպլոմ կամ հավաստագիր ունեցող անձինք, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի կողմից կազմակերպված ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ոլորտում համապատասխանության գործնական դասընթացը և որակավորման քննությունն անցած անձինք:

**12.5.** Ներքին դիտարկումների մարմնի աշխատակից չեն կարող լինել այն անձինք, ովքեր.

- 1) կատարել են դիտավորյալ հանցագործություն, որի համար դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,
- 2) դատարանի կողմից զրկված են ֆինանսական, հարկային, մաքսային, առևտրային, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից,
- 3) սնանկ են ճանաչվել և ունեն չմարված (չներված) պարտավորություններ,
- 4) քրեական գործով ներգրավված են որպես կասկածյալ, մեղադրյալ կամ ամբաստանյալ,
- 5) ունեն բացասական գործարար համբավ ֆինանսական համակարգում,
- 6) չեն համապատասխանում սույն Կանոնակարգի սույն գլխով սահմանված պահանջներին,
- 7) փոխկապակցված են Ընկերության ղեկավարների հետ:

### **ԳԼՈՒԽ 13. ՓԼ/ԱՖ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ**

**13.1.** Ընկերության բոլոր աշխատակիցները պետք է իրազեկ լինեն ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում Ընկերության ներքին իրավական ակտերին:

**13.2.** Ընկերությունը պարտավոր է կազմակերպել ուսուցում ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող իր բոլոր աշխատակիցների համար:

**13.3.** Ընկերությունը, սույն Կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, պարբերաբար՝ առնվազն տարեկան կտրվածքով կազմակերպում և/կամ իրականացնում է ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իր աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման ծրագրեր: Այդ ծրագրերը պետք է նախատեսեն ուսուցում խորհրդի անդամների, գործադիր մարմնի, Ներքին դիտարկումների մարմնի, Սպասարկող ստորաբաժանման և Ներքին աուդիտի ծառայության աշխատակիցների համար: Այդ աշխատակիցների համար ուսուցումը և վերապատրաստումը պետք է հնարավորություն տա հավաստիանալու, որ նրանք ունեն ՓԼ/ԱՖ կանխարգելման պահանջների ու ընթացակարգերի վերաբերյալ պատշաճ գիտելիքներ, մասնավորապես՝

1) բարձր, միջին և ցածր ռիսկի չափանիշների, կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության առավել հաճախ հանդիպող հիմքերի և չափանիշների վերաբերյալ, այդ թվում՝ Լիազոր մարմնի ուղեցույցերով տրամադրվող կասկածելի գործարքների տիպաբանությունների վերաբերյալ,

2) ՓԼ/ԱՖ դեմ պայքարի ՀՀ օրենսդրության, սույն Կանոնակարգի, Ընկերության ներքին իրավական ակտերի դրույթների վերաբերյալ:

13.4. Ընկերությունում նոր աշխատակիցների ընդունման դեպքում համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կազմակերպում է աշխատակցի՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման հարցերով ուսուցում՝ աշխատանքի անցնելուց հետո եռամսյա ժամկետում:

13.5. Ընկերության կառուցվածքային ստորաբաժանման կողմից իրականացվող ուսուցման ծրագրերը, դրանց վերաբերյալ բոլոր նյութերը, ինչպես նաև ուսուցման ծրագրերին մասնակցած անձանց անուններն ու ստորագրություններն առանձին հաշվառվում են համաձայն Հավելված 1-ի և պահպանվում են տվյալ ստորաբաժանումում առնվազն 5 տարի:

13.6. Ուսուցումն ու վերապատրաստումն այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված լինելու դեպքում, դասընթացին մասնակցած աշխատակիցը հնանարավորինս կարճ ժամկետում Ներքին դիտարկումների մարմնին է ներկայացնում 13.5 կետով սահմանված փաստաթղթերը:

#### **ԳԼՈՒԽ 14. ՊԱՏԱԽՍԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ**

14.1. Ընկերության յուրաքանչյուր կառավարման մարմին պատասխանատվություն է կրում Օրենքով և սույն Կանոնակարգով իրեն վերապահված գործառույթների պատշաճ և ամբողջական իրականացման համար, ՓԼ/ԱՖ կանխարգելումն արդյունավետ կազմակերպման խոչընդոտների վերացումն կազմակերպելու համար:

14.2. Ընկերության յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար պատասխանատվություն է կրում սույն Կանոնակարգով սահմանված գործառույթներն ու պահանջներն իրենց ստորաբաժանումներում պատշաճ կազմակերպելու և կատարումն ապահովելու, Ներքին դիտարկումների մարմնի հետ օպերատիվ համագործակցելու համար:

14.3. Ներքին դիտարկումների մարմինը պատասխանատու է Օրենքով, Լիազորված մարմնի նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնակարգով սահմանված գործառույթներն ու պահանջների պատշաճ և ամբողջական կատարման համար, Ընկերության Խորհրդին, գործադիր տնօրենին և Լիազորված մարմնին հաշվետվություններ և այլ տեղեկություններ տրամադրելու համար:

14.4. Սույն Կանոնակարգի պահանջները խախտելու համար գործադիր տնօրենը , Սպասարկող ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները պատասխանատվություն են կրում Օրենքով, Ընկերության ներքին իրավական ակտերով և/կամ իրավասու մարմնի որոշմամբ սահմանված կարգով:

## ԳԼՈՒԽ 15. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15.1. Սույն Կանոնակարգով չկանոնակարգված ՓԼ/ԱՖ կանխարգելմանն առնչվող հարցերը սահմանվում են Օրենքով, Լիազոր մարմնի նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության՝ Ներքին աուդիտի գործունեության կանոնակարգե, Հաշվետվությունների ներկայացման կարգի, Ժամկետների և պատասխանատվության վերաբերյալ կանոնակարգե ներքին իրավական ակտերով:

15.2. Սույն Կանոնակարգը հաստատվում և փոփոխվում է Խորհրդի կողմից և դրանում կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում Ընկերության Խորհրդի կողմից հաստատման պահից:

15.3. Կանոնակարգը պետք է վերանայվի առնվազն 2 տարին մեկ անգամ, ինչպես նաև Օրենքում և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերում էական փոփոխություններին համապատասխանեցնելու անհրաժեշտության դեպքում: Սույն Կանոնակարգի և դրա փոփոխությունների նախագծերը մշակվում և հաստատմանն է ներկայացվում Ներքին դիտարկումների մարմնի կողմից:

15.4. Սույն Կանոնակարգը (դրանում կատարված փոփոխություններն ու լրացումները) հաստատման պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացվում է Լիազոր մարմնին:

**ՓԼ/ԱՖ կանխարգելման շրջանակում անցկացված ուսուցման/վերապատրաստման թերթիկ**

h/ հ	Անցկացման ամսաթիվ	Ուսուցման/վերապատրաստման կազմակերպիչ (անձ և/կամ կազմակերպություն)	Մասնակից ներ (անուն, ազգանուն, ստորաբաժանում)	Ուսուցման/վերապատրաստման ծրագիր, թեմա(ներ) <sup>1</sup>	Մասնակից ների ստորագրություն

Ուսուցման/վերապատրաստման

կազմակերպող անձ<sup>2</sup>

.....

(ստորագրություն)

<sup>1</sup> Ուսուցման/վերապատրաստման ընթացքում տրամադրված նյութերը կցվում են թերթիկին և պահվում:

<sup>2</sup> Ուսուցման/վերապատրաստման կազմակերպող անձի ստորագրությունը պարտադիր է այն Ընկերության/Ընկերության ստորաբաժանումներից մեկի կողմից կազմակերպված լինելու դեպքում:

**Հավելված 2**

ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ (ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

‘ս’ ----- ս, ----- թ. -----

----- գործարար հարաբերության մեջ կամ միանգամյա գործարքում  
հանդես գալով որպես -----, հայտարարում եմ, որ գործարար  
հարաբերության մեջ կամ միանգամյա գործարքում առկա է/առկա չէ իրական շահառու:

Առկայության դեպքում՝ իրական շահառու է ----- ը:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի  
փոփոխության կամ շահառուի ի հայտ գալու դեպքում տեղյակ պահել -----  
-----ին:

-201--թ. -----